

վում, որ նշանաւոր դրողի դէմ է Պարիզի աղ-
գարնակութեան ամբողջ հասարակ մասը, որը
մինչեւ իսկ փորձում էր խեղդամահ անել նրան
Սենայի մէջ, բայց այժմ փոքր առ փոքր պարզ-
վում է, որ ժողովուրդը կամ ամբողջը, ամբողջ-
ջապէս առած՝ քիչ մասն ունի այդ արհեստա-
կան աղմուկները մէջ: Ինքը Զօրան, որ դատա-
րանի դատարանում գտնուող բարձրագոյններին միջո-
տեց «մարդակերներ» անուանով, առաջինը հաս-
տատեց այդ: Մի ժողովարարի հետ ունեցած խո-
սակցութեան ժամանակ նա ուղղակի ասաց. «Նա
չառ լաւ կարծիք ունի Պարիզի ժողովուրդի
մասին, և երբեք նրան չեմ խառնել թափա-
ռաշի կ'հրէր խմբերի և վարձկան կ'ա-
կեցներին հետ»: Նա հակադրապական ցոյցները դը-
նուար դերակառուարները հէնց այդ թափառա-
շի կ'հրէր խմբերի և վարձկան կ'ա-
կեցներին հետ, լարված, յայտնի է, թէ ում կողմից...
Դատարանի դատիճի մէջ ահազին սկանդալ-
ներ սարքողները, ինչպէս այդ ապացուցված է
արդէն, զլիսաւորապէս չորեքը փոխած զինուո-
րակներին էին, ուրեմն ոչ թէ զինուորին, այլ
քարձը, «արտօնված» զինուորական դատակարարին
պատկանողներ: Դուրսն էլ, փողոցի մէջ՝ դատա-
րանի դատիճից լսվող դոռոցներին ձայնակիցները
թէն ժողովուրդի անունն էին կրում՝ բայց դուրս
եկաւ, որ նրանք ոչ թէ ազնիւ ժողովուրդին էին
պատկանում, այլ կապում էին թափառաշի կ'ա-
կեցներին և կ'աղակոտնեցին այն դատակարարը, որը բա-
րդական նոյնքան կապ ունի աշխատաւոր
ամբոխին հետ, որքան և ֆրանսիական արհեստե-
րատարին հետ: Արեւմտ, որտեղ մնաց ֆրանսիա-
կան ժողովուրդը, որին այսօր շատերը մեղադ-
րում են ամենատարբեր խնամքներով, ամենախա-
ւար չարութիւնների մէջ...
Չը պէտք է մոռանան ժողովուրդի երգիւհալ թը-
նամիները, որոնք ներկայ դէպքից էլ օգուտ են
քաղում ամբոխին հէշտաւոր կերպարանքով դուրս
բերելու, որ այդ նոյն ժողովուրդը միշտ և ամեն
տեղ մի յատկութիւն ունի, լինել անսահման և
կատարել իր կրքերին, իր ցասման մէջ: Նիւթ, ճը-
մարիտ, հակադրապական ցոյցները ժողովուրդի ընդ-
հանուր արարածութեան արձագանք լինելին,
նա չէր բաւականապէս միմիայն «մահ Զօրային»,
կամ «խեղդի Զօրային» դատարի աղաղակներով
այլ իսկ որ Սենայի մէջ խեղդամահ կանէր, կամ
փողոցի մայրիկին վրա կը արցելէր այն մարդուն,
որին նա անկեղծօրէն հայցէր իր թէ չնա մի
է համարում: Սակայն և ոչ մի այդպիսի բան:
Արհեստական վարձկան թափառաշի կ'ա-
կեցները բարձրագոյն գոտիները, ինչպէս միշտ լինում
է, մնացին գոտիներ, և ժողովուրդի թշնամին»
հանդիման կերպով, ձեռնադրապարտ իր համար ձա-
նապարհ բաց անելով, օրը երկու անգամ անց-
նում էր «մարդակերներին» միջով և գնում դէպի
իր տունը...

իմաց են տուել Շահին: Հայերի հաստատարու-
թեան համար հաղորդեց Շահի հայրական ող-
ջոյնները և անսահման վատաւթիւնը: Ամիր-
Նիզամը խոստացաւ պաշտօնանկ անել Սալմաս-
տի և Սոյի ներգաղթող արաբաւորներին և տալ
արժանաւոր պատիւ. ասաց նաև, որ բռնված
հայերի թիվները օրինական ձանապարհով քննե-
լուց յետո՞ք կարճակէն իրանց:
Ամեն օր փաստեր, փաղուն, ապացոյցներ բո-
ւոր, կամայական, կեղծիչ պաշտօնեաների կեղ-
տոտութիւնները մերկայանում ամեն օր նորանոր
փորձեր դաւաճանների կողմից պարտկանայի
հանդիման փրկվելու, կատակարարութեան և հայ ժո-
ղովրդի մէջ թշնամութիւն և ատելութիւն սերմա-
նելու... Արդեօք չէ հասել ժամանակը, որ վերջ
գտնեն այս ստոր խաղերը: Ժամանակ է, այո,
ջախջախ ստորաքաղաք, սկսակալէլ պաշտօնեա-
նեքին, որոնք ամեն բոլի պարտութեան են «չլուր»
ձեռք դրաւոր համար: Արաբաւորական այդ
իրաւամբ սպառում է Ամիր-Նիզամի իմաստուն
վարչութիւնից:
Ի դէպ, չը մոռանանք յիշել, որ Թաւրիզում
հրատարակվող «Նասրի» կիսամեայ լրագիրը իր
վերջին համարում, փետրվարի 11-ին, տպեց մի
առաջնորդող՝ «Հայերի ապերախտութիւնը» վեր-
նագրով: Վերջին տարին օսմանեան փայլուն ու-
կնեքի չորսը թափառող խմբերը, իր առաջ-
նորդութեամբ հայերի վիճակը Թիւրքիայում և, ե-
րեակայեցեք, Ռուսաստանում ամենապատմա-
րդիկներով նկարագրելուց յետոյ, կանգ է առնում
Պարսկաստանի վրա: Համարելով այս երկիրը
հայերի միակ դրախտը, սկսում է հայերին թա-
ղել բարբարոսների տակ, և ապա՝ փրկուրը բե-
րանին՝ յարձակվում է «Մշակի» վրա, կամենա-
լով ապացուցանել, որ «Մշակը» իր ուղղութեամբ
ամենաթշնամի լրագիրն է Շահի կառավարու-
թեան համար: Անկողը ենք համարում այդ պար-
զամբ մարդուն բան հասկացնել, այլ թողնում
ենք, որ դէպքերը դասեր տան իրան, եթէ մի-

Ֆրանսիական զինուորականութիւնը և այժմեան
կառավարութիւնը, որոնք տեղը եկած ժամանակ
գիտեն արհամարհել ժողովուրդը, հասկանա-
լի պատճառներով, շատ աշխատեցին ցոյց տալ,
որ «հայերի» փրկութեան ներկայ հարցում ամ-
բողջ ժողովուրդը իրանց հետ է, բայց հազիւ մի
քանի օր անցած, քիչ-քիչ պարզվում է, որ Պա-
րիզեան աղաղակները մէջ ֆրանսիական ժող-
ովուրդը նոյնքան մասն ունի, որքան ճշարտու-
թիւնը՝ էտոէրնադիին արդարացնելու մէջ...

Խ. Մարտիան

ԱՋԱՏ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԶՆ-
ՆՈՒԹԻՒՆԸ

Առաջիկայ մարտ ամիս 12-ին Պետերբուրգի
Ազատ-անտեսական ընկերութեան մէջ նշանակ-
ված է յատուկ նիստ՝ ժողովուրդին հաց մա-
տակարարելու խնդրի մասին: Ընկերութիւ-
նը առանձին չընթերցականով հրաւեր է կար-
գում բոլոր հմուտ անձանց՝ օգնել ընկերութեա-
նը՝ մշակելու յարուցած հարցը թէ զինուորա-
նեքով և թէ բերանացի կերպով: Այն անձինք,
որոնց համար անհրաժեշտ է անձամբ ներկայ լի-
նել, կարող են ուղարկել իրանց կարծիքները
գրաւոր կերպով: Ընկերութիւնը յոյս ունի իր
նիստերով պարզել խնդիրը և կառավարութեան
համար հեշտացնել նոր կանոնադրութիւն կազմե-
լու գործը:

Դեռ չորս տարի սրանից առաջ, երբ Ռու-
սաստանը մեծ դոհողութիւններով աղատվեց ընդ-
հանուր սովի աւերածննդից, ապաւել է կա-
հացի պաշարներ ունենալու և ժողովուրդին հաց
մատակարարելու հարցը: Ներքին գործերի մի-
նիստը ընկերութեան մէջ կազմվեց մի յատուկ յանձ-
նաժողով, որ զբաղվեց այդ հարցի մշակութեամբ:
Յանձնաժողովը ուսումնասիրեց բոլոր անցեալ և
ներկայ փոքրերը, ժողովեց նիւթ այդ առարկայի
մասին ուրիշ երկիրների պրակտիկայից և մշա-
կից այն նոր ծրագիր՝ ապագայ գործունէու-
թեան համար: Սակայն այդ ծրագիրը չը ստա-
ցաւ օրենսդրական հաստատութիւն: Խնդիրը
ձանդաղեց էր. լրացուցիչ ջնտութեան պէտք
զգացվեց և նոր ուսումնասիրութեան և վերաքն-
նութեան պահանջը լրացնելու պատճառով խնդ-
րվեց յետ և ձգվեց: Մինչևեւ անբերրութիւնը
ամեն տարի տեղի ունի Ռուսաստանում, եթէ
ոչ ընդհանրապէս պետութեան ամբողջ տարա-
ծութեան վրա, դրե՛ն այս կամ այն նախագիտ-
կամ մի շարք նախադիմումներ:

Այժմ առաջ ունենալով խնդրի մեծ կարեւոր-
ութիւնը և անցեալածագելի լինելը՝ Ազատ-անտեսա-
կան ընկերութիւնը վերցրեց իր վրա նախաձեռ-
նութիւն՝ քննել այդ խնդիրը իր նիստերում և
մշակել հացի մատակարարութեան ծրագիրը: Հա-
րցը նոյնքան մեծ կարեւորութիւն ունի Անդրկով-
կան դէպքերից օգուտ քաղելու ընդունակութիւն
ունի: Խորհուրդ ենք տալիս «Նասրի» լրագրին,
եթէ արգարե մտադիր է ծառայել հայրենիքին, ա-
կանջ չը դնել այն ազնիւներին, որոնք ոչ միայն
Պարսկաստանի բարեկամը չեն, այլ իրանց հայ-
րենիքն էլ քարոքաւոր արին՝ իրանց անմիտ քա-
ղաքականութեանը...

ՆԵՐՍԷՍ Մ ԵՒ ԻՇԻԱՆ ՎՈՐՈՇՈՅՈՎ

Իշխան Վորոնցով գրում է Ներսէս կաթողի-
կոսին 1852 թ. դեկտեմբերի 6-ից.
«Մեկնե՛ք ուրախացած ձեր վեհափառութեան
նոյնեքների 22-ից գրած ողորմած և բարեհաճ
պատասխանից և կատարեալ յոյս ունենալով, որ,
ինչպէս խոստանում էք, շուտով կը լինե՛ք մեզ
մօտ, Քիֆլիսում, ես չը դիտի արդեօք նորից
գրե՛մ ձեզ, որովհետեւ կարծում էի թէ դուք է՛ն
միակ այլ ևս չի համար ձեզ իշխանութեան: Մինչ
այդ՝ ստացաւ մի նոր նշան, որ ցոյց է տալիս
թէ դուք ողորմածաբար յիշում էք ինձ, այն է,
ինձ համար մեծ քանակութեամբ Ներսէս զինի
ուղարկելը. ես բոլորովին չեմ կարող յետաձգել
իմ պարտականութիւնը և դուարձութիւնը յայտ-
նելու ձեզ անցապաղ իմ սրտագին երախտագի-
տութիւնը: Կը խմե՛ք այդ զինին ձեր կինսը,
բայց աւելի լաւ և հաճելի կը լինի խմել ձեզ
հետ միասին, և որքան շուտ, այնքան լաւ: Իշ-
խանութեան և կոմսութեան Շուաղել համբուրում են
ձեր ձեռքը և խնդրում են ձեր օրհնութիւնը. ես
էլ նոյնն եմ անում և խնդրում եմ հաւատալ իմ
անկեղծ յարգանքին ու կատարեալ անձնութեան
թեան և այն: Իշխան Մ. Վորոնցով:»
1852 թ. վերջին Ներսէս Քիֆլիսում էր և
Վորոնցովներին ընդունական չընդունում վայելում
էր ընդհանուր համակրանք, յարգանք և փաղա-
քանք:
1853 թ. յունիսին րոյս տեսաւ Շանչեանի ու-
սերէն թարգմանած Ներսէս պատմութիւնը Ներ-

կատու, որքան և ներքին նախադիմում: Մեր
մէջ անբերրութիւնը դարձել է քրօնական, և
օգնութեան պահանջը զգացվում է ամեն տա-
րի: Շատ հետաքրքրական է, թէ ինչ կերպացու-
թիւններ կը գալ Ազատ-անտեսական ընկերու-
թիւնը իր նիստերում: Նիւթ գտնվին մարդիկ,
որոնք կարողանան յիշած ընկերութեանը տալ
մշակած նկարագիր Վոլկասի և Անդրկովկասի
պէտքերի, և այն փորձերի մասին, որ արված
են զանազան ժամանակներ մեր երկրում, լա-
ծառայութիւն մատուցած կը լինէին, որովհետեւ
այն ծրագրի մէջ, որ պէտք է մշակվի, ուշադ-
րութեան արժանի կը լինէին և մեր երկրի
պէտքերը, պահանջները և առանձնապատկութիւն-
ները: Բայց ո՞ր են այդպիսի մարդիկ: Ո՞վ է
լուրջ կերպով ուսումնասիրում մեր ժողովրդա-
կան խնդր խնդիրները:

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԱՐԲՈՒՆԱԿԱՆ ԳԻՒՎԱՅԻՆԵՐԸ

Փետրվարի 19-ին, Պետերբուրգում, սկսեց իր
նիստերը Բարձրագոյն հաստատված մի յանձնա-
ժողով, որ պէտք է քննի Անդրկովկասի հինգ նա-
խադիմելի արքունական գիւղացիներին վերաբե-
րեալ հողային օրենսդրութեան ծրագիրը: Յանձ-
նաժողովի նախագահ է երկրադրութեան մի-
նիստը Նրոնցով: Բանալով առաջին նիստը, մի-
նիստը առանձնապէս շեշտեց այն հանգաման-
քի վրա, որ յանձնաժողովի գործունէութիւնը
սկսվում է այն օրը, երբ տեղի ունեցաւ եւրօպա-
կան Ռուսաստանի գիւղացիների աղատութիւնը,
և ցանկութիւն յայտնեց, որ դա կը լինի մի լաւ
նշան Անդրկովկասի գիւղացիների հողային վի-
ճակի բարեկարգութեան համար: Ապա մասնա-
նիշ անելով այն նախապատրաստական գործերի
վրա, որոնք տեղի են ունեցել և այն հակաձա-
ռութիւնների վրա, որոնք ծագել են ծրագրի
նախնական ընտելութեան ժամանակ, մինիստը
նպատակադրեալ համարեց նախապէս դնել մի
քանի ընդհանուր հիմնական հարցեր, որոնց լու-
ծելուց և օրենսդրական կերպով հաստատելուց
յետոյ, կարելի կը լինի աւելի հեշտ կերպով մշա-
կել ամբողջ գործի մանրամասնութիւնները, ինչ-
պէս այդ արվել է Մերիքի չորս նախադիմելի վե-
րաբերութեամբ: Այդ հարցերից առաջինն նիստում
քննարկեան ենթարկվեցին հետեւեալները. 1) հո-
ղաւորներին չարի որոշելը, 2) արքունական
ազատ հողերի գործարարութիւնը, և 3) գիւղացի-
ների զանազան դատակարարելի բաժանելը՝ հողա-
կին բարեկարգութեան գործի համար:

Յանձնաժողովի կազմութեան մէջ մտնում են
հետեւեալ անձինք. պետական քարտուղարի օգ-
նական Ստիշկուսի, երկրագործութեան մինիստրի
օգնական Նարիշկին, ֆինանսներ, զինուորական,
ներքին գործերի, արդարադատութեան մինիստ-
րութիւններից ներկայացուցիչներ, պետական

սէս մի մի հատ այդ գրքից նուրբեց Վորոնցովի
ընտանիքի անդամներին: Ահա ինչ էր գրում նա
իշխան Վորոնցովին.

«Իշխան Միխայիլ Սեմիոնովիչ: Ուղարկում եմ
ձեզ պարզ և հայտնի եկեղեցու փառաւոր հօք, Նդի-
չէ վարդապետի պատմութիւնը: Դա հայ ազգի
կենդանի հատուկ մի կենդանի յուշաձեւն է:
Նա կը ծանօթացնէ ձեզ հայոց եկեղեցու և այն
տանջանքների հետ, որ հայերը կրեցին աշխար-
հի Փրկչի սիրով համար, որ պահեն այդ եկեղե-
ցին մաքուր և անձեռնմխելի, ինչպէս ստացել
էին իրանց նախնական նախնիքներից: Այս վարդ-
պետութիւնը մեր սեմինարիանի տեսիլ աշխա-
տութիւնների պտուղն է, այն տեսիլ, որ ինձ
հայմար միշտ մի սրբելի ծոյլ է եղել: Նա կատա-
րեալապէս աղող թարգմանել է ամբողջ լուսաւոր
Եւրօպային յայտնի Նդիչ վարդապետի պատմու-
թիւնը: Այս առաջին, իր տեսանի մէջ միակ
թարգմանութիւնը իր հարազատութեամբ արժա-
նացել է իմ կատարեալ հաւանութեան:»

Միւս տարին, 1853 թ. ապրիլի մարտին, իշ-
խան Վորոնցով հեռացաւ Քիֆլիսից, իր հիւան-
դութեան պատճառով ստացած լինելով 6 ամս-
վայ արձակուրդ: Քիֆլիսից հեռանալիս, Վորոն-
ցով իր պաշտօնը ժամանակաւորապէս յանձնեց
զինեալ Րէպին մինչև իր վերադարձը և նրան
ուսած մանրամասն հրահանգի մէջ, ի միջի այ-
լոց, գրեց հետեւեալը.

«Նկարագրելով ձեզ համար իմ կարծիքը բո-
լոր բնակիչների և Ռուսաստանի հպատակների
մասին և կրկնելով այն, ինչ վերեւում ասացի բո-
լոր հայերի դէպի մեզ ունեցած հաւատարմու-
թեան և նոյն իսկ սիրով մասին, հայերի, որոնց
մէջ նոյն իսկ մի քանի պատերազմաւոր դասա-
կարգի կան, որոնք միշտ պատրաստ են ծա-
ռայել մեզ մեր թշնամիներին դէմ, կառնադիմեմ
միայն այն, որ Ներսէս կաթողիկոսի անձին մէջ
դուք ունե՛ք մի գործը և միշտ պատրաստ գործի
լուսաւորչական դաւանութեան բոլոր գործերի և

կոմսորի ներկայացուցիչը, Վոլկասեան կառավար-
չապետի կողմից նրա դիւանատան գրեկաօր
Միցկիսից, երկրագործութեան գէպարտամիստի
գրեկաօրը, երկրագործութեան մինիստրի կովկա-
սեան հաւատարմատար Սեդվեդեկ և մի քանի
ուրիշ պաշտօնեաներ:

Ներկայ օրենսդրական գործողութիւնը աշտու-
նեալ նպատակով դեռ 14 տարի սրանից առաջ
Անդրկովկասում, Տիֆլիսի գիւղակարութեան
սկսվեցին մասնագէտներ մի խմբի միջոցով գի-
ղացիների տնտեսական դրութեան հետազոտու-
թիւններ, որոնք հրատարակեցին «Материалы
по устройству казенных крестьян в Закавказьи»
անուանով: Դրանից յետոյ, 1892 թ. վին, Բարձրա-
գոյն թոյլտուութեամբ հաստատվեց Քիֆլիսում,
երկրագործութեան մինիստրի լիազօր Մեդվեդովի
նախագահութեամբ մի յանձնաժողով, որի մշա-
կած ծրագիրը 1897 թ. վին ենթարկվեց Վոլկասեան
կառավարչապետի խորհրդի քննութեան: Այդ
խորհրդի կերպացութիւնը և Վոլկասեան կառա-
վարչապետ իշխան Վոյնիցիի առանձին կարծիքը՝
միւս նիւթերի հետ միասին ներկայացված են
այն յանձնաժողովի ընտելութեան, որ ներկայումս
գործում է Պետերբուրգում:

Մեք ուշադրութեամբ կը հետեւե՛ք այդ հար-
ցին և հետևանքները կը հաղորդենք:

ՆԱՍԱԿ ՄՈՍԿՎԱՅԻՑ

Փետրվարի 18-ին
Արդէն իրողութիւն է, որ մեր հոգեւորականու-
թիւնը չէ կանգնած իր կոչման բարձրութեան
վրա և վարակված է ամեն տեսակ պակասու-
թիւններով: Մեր նպատակը չէ այստեղ մի առ
մի թիւ նրա բոլոր պակասութիւնները, վերջա-
պէս դա մեզ բոլորիս այնքան յայտնի է առօ-
րեայ կեանքից, որ կարոտ չէ ոչ մի նոր բացատ-
րութեան: Նա եթէ մեր հոգեւորականութեան շատ
պակասութիւնների մէջ առաջին տեղը դնե՛ք
տղիստութիւնը, երկրորդ տեղն անշուշտ կը բռնէ
մուրացկանութիւնը, այս բանի բուն նը-
շանակութեամբ: Դժբաղդաբար, այս վերջինը
խոր արմատներ է գցել մեր հոգեւորականութեան
մէջ և այնպէս սխտեմանակաբար է գործադը-
վում, որ կարծես թէ դա մեր եկեղեցու ողո-
ւածանքի մէջ լինի: Եստ շատերը, որոնք հա-
մար թանգ է եղել մեր եկեղեցին, յաճախ առա-
ջարկել են վերացնել մուրացկանութիւնը, հո-
գեւորականութեան այդ սպանիչ ախտը, և իբրեւ
այդ ախտը արմատականապէս բուժելու դարման,
առաջարկել են քանադայական դպրի համար
պատարեալ նիւթ թափառում ապահովել թափա-
ւորութեանը: Մեք էլ այն կարծիքն էինք, որ քա-
հանայական դասի նիւթ թափառում ապահովելու
թիւնը կը փոխի նրան դէպի լաւ և կազաւոր
այն բոլոր պակասութիւններից, որոնք նիւթա-

յարաբերութիւնների վերաբերմամբ: Նա ճանա-
չում եմ նրան այն ժամանակից, երբ ես այստեղ
էի իշխան Յիցիանովի մօտ. յետոյ նա Քիֆլիսի
առաջնորդ էր և միշտ մեզ մեծ ծառայութիւն
ներ է մատուցել: Հանդուրեղ փոխ-գործապետ
Իշխան Կորգանով, որ ամբողջ երկրում ամենա-
վատ յատկութիւններով յայտնի մի մարդ էր,
կարողացաւ անուանարկել նրան Ֆէշդաբաշա
Պատկիւնի մօտ, որի աղին հողին չը կարողա-
ցաւ բմբռնել, որ Կորգանով գործում էր վրէժի
և իր շահի զգացմանը: Ներսէս, իբրեւ թեմա-
կան առաջնորդ, հեռացրեց Բեաւարեան և հա-
յոց եկեղեցին գրեկից միակ մարդուց, որ կարող
էր հաստատել նրա մէջ կարգ, հիմնել սեմինա-
րիաներ և դպրոցներ և ապագայի համար լաւ
քահանաներ պատրաստել: Նոյնպիսիները այս-
տեղ նրանից յետոյ երեսն վրա գցեցին բոլոր
օգուտաբար հիմնարկութիւնները:

Վերջապէս, 1843 թ. վին, երբ էլ միմանի դարձ
թափուր մնաց, Ներսէս ընտրվեց այդ հռչակա-
ւոր աստիճանի համար և հաստատվեց թաղաւոր
Վայրից: Արտասահմանի բոլոր հայերը իրանց
զլիստը հոգեւորականութեան հետ առաջին ան-
գամ ձանաչեցին էլ միմանի կաթողիկոսի առաջ-
նութիւնը և իշխանութիւնը: Ներսէս, նախապէս
ներկայանալով թաղաւոր Վայրին, եկաւ այն-
տեղ, և թէն այժմ 80 տարեկանից աւել է, բայց
դեռ բաւական ոյժ ունի, որ գործէ եռանդով և
շատ մեծ օգուտակարութեամբ իր հաւատակիցնե-
րի համար և Ռուսաստանի աղեղեղութիւնը պա-
հելու համար: Նա միշտ գտնում էր նրա մէջ կա-
տարեալ պատրաստականութիւն օգնել մեզ կա-
մեն մի օգուտաւոր գործի մէջ, երբ նա կա-
րող էր մասնակից լինել գործերին. դուք դրա-
նում շուտով և կատարեալապէս կը հաւատարա-
նաւ և մեզ պէտք է միայն ցանկալ, որ Աստ-
ած մի քանի տարի էլ երկարացնէր այս օգուտ-
կար ձեռնուռ կեանքն ու առողջութիւնը:

(Կը շարունակվի)

—Մեղքերդ ուր են:
—Ծրարիս մէջ:
—Բոլոր մեղքերդ այդ ծրարին մէջն են: Եւ այդ
—Այո:
—Մա՛րդ, կրտս յայտնում միւսը կառք կեցնե-
լով, տես այս կառքին մէջ գտնուած բեռները՝
բոլոր իմ մեղքերս են, այդ փողերի ծրարդ ալ
կառքիս մէջ նստէ ու ել դործիդ գնա, մեղք
չես որ այդչափ չնչին բանի մը համար դժուար
կրթուաւ:
Եւ ծրարաւորը չորհակալ լինելով ջով մեղա-
ւորին, ծրարը կառքին մէջ կը նստէ և կը մեկնի:
«Բիւզանդիանի» ալ խմբագրին՝ արդարութիւն
մը ի գործ դրած չի լինի՝ եթէ քիչ մը իր կառ-
քը կեցնէ, փողերի ծրարաւորներն իրեն հետ
դժուար չի տանելու համար...
Վահէ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒԻՐԵ

—«Droit de l'Homme»-ի մէջ հրատարակուած
է «Journal» լրագրի աշխատակից Ժան Աժարէ-
րի նամակը, որը յայտնում է, թէ այդ լրագրի
աշխատակիցներէն շատերը, որի մէջ տպուած էր
Ջորայի «Paris» վէպը, համարաշին չեն «Journal»
լրագրի խմբագիր Ֆերդինանդ Կաօի հետ՝ այդ
վէպին վերաբերմունքը պատճառով դէպի է-
միլ-Ջորային: Աժարէրի խօսքով, Կաօ առաջ աղա-
չում էր Ջորային իր արշաւանքը յօդուտ Գրէյ-
ֆուսի սկսել «Journal» լրագրում, իսկ յետոյ
միտքը փոխեց և սկսեց Ջորայի դէմ գնալ: Կաօի
վարմունքից վրդովւած «Journal» լրագրի աշ-
խատակիցները մեծամասնութիւնը հետեւեալ հա-
մակարկան ուղերձն ուղարկեցին Ջորային. «Ներ-
քոյ ստորագրողներս ինդիքում ենք էմիլ Ջորային
ընդունել մեր կատարեալ համակրութեան և
յարգանքի հաւատարմութեամբ անդին ջանքերի հա-
մար մի գործում, որի մէջ չօգտուած է ազա-
տութեան և հանրապետութեան վերահսկող: Ստո-
րագրիցին՝ Կաօն Մէլոն, Ուիլյամ Միլըս,
Անդրէ Տէրիէ, Ժան Բիշպէ, Մորիս Կոնէ,
Էրնէստ Լեա-Փենէս, Ժորժ Մեն, Էմիլ Բէրտէլ, Պոլ
Արան, Սիլվերին, Հիւզ Լէրու, Մարտէլ Պրէ-
փօ և ուրիշները:

—«Kolnische Zeitung» լրագրի Նապոտակից
ստացած տեղեկութիւնները համաձայն, այս
ձմեռ Պորտ-Արտուրում անդնդհատ կանոնա-
մէկ կամ երկու անգլիական կրէպերներ՝ ուս-
ների վրա հակելու դատաւարութեամբ:

—Լուիսից «Matin» լրագրին հետագրում են,
որ Անգլիայի և Միացեալ-Նահանգների ժողո-
րդները և դրոշմները բոլոր են կազմում Ջորայի
դատաւարութեան դէմ:

—Կանտոնից գրում են որ, եթէ հանգամանք-
ները չուտով չը փոխվեն, Կրեմլին մի քանի տե-
ղերում չուտով սով կարող է երեւալ: Զբաղմուն-
քը այդ սովի փոխարին չենթարկվելու համար,
հարկւններով սկսում են գաղթել Յունաստան
Վերջին շաբաթվայ ընթացքում 300 ընտանիք
են գաղթել: Բէտիմայում 734 փախստականներին
օգնեցին ուստաց զինուորները, իսկ Պալեստին
հաւաքւած 755 գաղթականները ուստիքի պա-
շար ստացան ուստաց հիւպատոսից:

—Պարիսից հետագրում են «Kolnische Zeitung»
լրագրին, որ Էմիլ-Ջորայի գործի քննութեան ժա-
մանակ, դատարանի դաշինքում, հասարակ շրջեր
հազած ծպտեալ օֆիցէրներ կային, որոնք ընդ-
հանուր շտաբի հրամանով՝ աղմկակից ցուցեր էին
անում: Այդ իրողութիւնը յայտնվել է հետեւեալ
կերպով. Օֆիցէր անունով փաստաբանի ձեռքն
է ընկնում մի նամակ, որ մի և նոյն ազգանունով
մի ուրիշ փաստաբանին գրել էր Պատի-դը-Ալեա-
մը. այդ նամակի մէջ վերջինս խնդրում է մուտ-
քի տուրքները հասցնել մի քանի օֆիցէրներին,
որպէս զի նրանք կարողանան արդիւն «Բէյֆու-
սի բարեկամներին ցուցեր անելու: Փաստաբանը
ցուց է տալիս այդ նամակը արդարադատու-
թեան մինիստրին:

ԽԱՌՆ ԼՈՒԻՐԵ

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ ՄԻ ԷՋ
(Փարիսի ֆիլիսոփայ)

Մի դար առաջ, այսինքն 1798 թվականներին,
Կ. Պոլսի պատարարական բարձր դահլիճ վը-
րա բազմում էր Օրմանեան:

Այդ դարը ունեցել է իր որոշ և այսօրվանից
տարբեր հասարակական պայմաններ: Յիշե՛ք
մի քանիսը:

1. Փոքրը մեծի առաջ ոտի կանգնած բարե և բե-
ռնում:
2. Վարձապետը հողաբարձուի առաջ չէր խո-
սում:
3. Վաճառատան ծառայողը գրագիրը իրաւունք
չուէր իրան պետի հետ հասարակական ժողով-
ներին մասնակցելու և կարծիք յայտնելու, թէ-
կազ իր պետից շատ բարձր կրթութիւն ստա-
ցած լինէր:
4. Կրթիկները մեծ ազաների և մանա-
ւանդ հոգևորականների թերութեանց և
զեղծումների մասին դիտարկութիւն անելու ի-
րաւունքը և համարձակութիւնը չէին վայելում:
5. Թղթակիցները լրած լուրերին առանց հա-

լածանք կրելու չէին կարողանում մամուլի հա-
ղորդել:

6. Հասարակութեան բերնի մէջ ման եկած
լուրն աւելի ճշմարիտ էր համարվում, քան հրա-
պարակված և հրապարակաւ էլ պաշտօնա-
պէս հերքւած լուրը:

7. Իւրաքանչիւր ամբաստանված իրան դա-
տաւորն էր լինում, ազատ էր լինում ինքնիրան
դատել և արդարացնել:

8. Խմբագիրները իրանց թղթակիցներին ծած-
կան ունեւերը հրապարակաւ յայտնելը ամօթի
և անազնութիւն չէին համարում:

9. Անհատը կամ հասարակութիւնը իրան
քուէով ընտրված պաշտօնէին գործունէութեան
հաշիւը պահանջելու իրաւունքը չէր վայելում:

10. Հասարակութիւնը բնաւ երբեք իրա-
ւունք չուէր իրան նուիրված փողերին ինչ նը-
պատակի ծառայելու և ինչպէս վստահվել իմա-
նաւոր:

11. Գողերը տոկոսաբեր թղթեր չէին
գողանում, միայն հնչուն դրամ վերցնում էին.
(նախանձելի դար):

12. Տոկոսաբեր թղթերն փող չէին հա-
մարվում, այլ ծառայում էին գանձարաններին
դարդն կազմելու և կամ աղքատների խրճիթներին
լուսամուտները ծածկել:

13. Երբ այդ տոկոսաբեր թղթերն օ-
տար ձեռքերի մէջ էին անցնում (անշուշտ պա-
տահմանք), չէր կարելի հրապարակ հանել, վա-
ճառել, կամ հնչուն փողի վերածել, որովհետեւ
իր գող ձեռքակալութիւն էին, (զարմանալի դար):

14. Հայրը որդուն երբեք պարտաւոր չէր հաշիւ
տալու և չէր տալ և չէր կարող տալ, և խո-
նար հորդն երբեք իրան թող չէր տալ իր հօ-
րից հաշիւ պահանջելու: (պէտք է գիտնալ, որ
այն դարուն հասարակութիւնից քուէով ընտրված
պաշտօնեան հայր և ընտրող ժողովուրդին տը-
ղայ էր համարվում):

15. Սուրն ճշմարիտ և սեն սպիտակ էր լի-
նում. (ով դարը, ով բարը):

16. Հասարակաց գործերը վարող պաշտօնեա-
նեք յօդուտ որեւէին նուիրված փողերը խղճի
կատարեալ ազատութեամբ կարողանում էին ա-
ւելի անհրաժեշտ պէտքերի ծառայեցնել, և
երբեմն նիւստ գրաւմանը պարտաւորացնել:

17. Որեւէր ստամբուլը դատարկ էին ձգում.
կուշտ փոքր նրանց համար ստամբուլի խան-
դարում էր համարվում, հետեւեալ չէին էլ
ցանկանում, որ խեղճ որեւէր քաղցած և դա-
տարկ ստամբուլները ծանրանկեղծ խանդար-
վին: (Ինչպէս երեւում է, այն դարուն մարդիկ
չաւ փափուկ սիրտ և որեւէր շատ փա-
փուկ ստամոքս ունեցել):

18. Մամուլը (ի հարկէ ազնիւ) միշտ գողում
էր, հաշիւ տալ, հաշիւ տալ. սակայն աղ-
գային հաստատութիւններից և ոչ մին լսում էր
այս ձայնը. (երանի մեր դարուն):...
Պօլսեցի

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՊԵՏԵՐԲՈՐԳԻ, 26 փետրվարի Թադէսի Կայս-
րա՛նի Ալեքսանդրա Ֆեօփոօվնայի առողջական
դրութիւնը մոտենում է բնականին: Ձախ ակաւ-
նի բորբոքումը կանգ առաւ. բոլորութիւնը ա-
տիճանաբար վերականգնուած է. չնչաւութեան
օրգաններին, գլխաւորապէս ալ լիւրի ներքին մա-
սերի հիւանդոտ դրութիւնը համարեա անհետա-
ցել է. բռնը և ինքնազգացումը միանգամայն
լաւ է. ջերմը 37,7. զարկերակը 75.

Բարձրագոյն ուկազով հրամայված է. անհրա-
ժեշտ համարելով ուժեղացնել դիւնստական նա-
ւատորմը, սովորական նախահաշից դուրս այժմ
և եթ բաց թողնել պետական գանձարանից 90
միլիոն ռուբլի:

ԲԱՂՈՒ, 26 փետրվարի: Բոաշիւ ընկերու-
թեան ֆոնդանը Բիւր-Էլ-Ջալիլում, որ արտավի-
ժում էր օրական 500,000 պուդ նաւթ, այը-
վում է: Հրդեհը ահագին է: Հրդեհն սրւնը լու-
սաւորում է հեռաւոր շրջակայքը: Արդէն այրված
է մէկ վիշտ: Փամին փրկում է դէպի Նոբէլի և
Շիբանկի նաւթահանքերը: Այրվում է նաւթային
պահեստը:

ՊԱՐԻՋ, 26 փետրվարի: Ուղղիչ ոտակաւու-
թեան դատարանում քննվում է էկադէմիստների
գանդատը, որով Ջորայի մեղադրվում է զինֆա-
մազիայի մէջ: Գատարանի առաջ ոչինչ բազմու-
թիւն չի կայ: Ջորայի դաւը անսկսողի միայն:
ԼՕՆԴՈՆ, 26 փետրվարի: Նաւատորմը ծա-
ռայողների թիւը մեծացնում է 6370 մարդու, ի
թիւս որոց 200 օֆիցէրներ:

ՎՆԵՆԻՑ, 26 փետրվարի: Պատգամաւոր-
ների ժողովը համաձայնեց նախագահի տրամա-
դրութեան տակ դնել 50 միլիոն դոլար, երկրի
պաշտպանութեան համար:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԳԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ ԱՆԴՐԵԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎՐԱՅ ԱԶՆՈՒԱԿԱՆՆԵՐԻ ԹԱՏՐՈՆ
Ուրբաթ, փետրվարի 27-ին
Բազուի հայոց դրամատիկական խումբը կը ներ-
կայացնէ
առաջին անգամ
ՉԱՐԼԷՅԻ ՄՈՐԵՔՈՅՐԸ
Յարս 3 դործողութեամբ
Հեղ. Բրանդոն Թոմասի, թարգմ. Ն. Ամիրբեանի:
Մասնակցում են՝ տ.տ. Ջարէլ, Մէլքեան, օր.օր.
Մարի-Հրանդի, Վարդիթի, պ.պ. Արեւեան,
Արարեան, Թուրեան, Մէլք-Յովսէփեան, Յա-
րութիւնեան, Պետրոսեան և ուրիշներ:

Սկիզբն է ձիւղ ժամի 8-ին: Տեղերի գինը սո-
վորական է:
Թատրոնը տարացնելու վրա առանձին ուշա-
դրութիւն է դարձված:
2—2 ԲՇԺԽՈՐ Ա. Ալլահմեդեան

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԻՐ ՀԻՒՆԵՐԱՆՈՑ
Բ. ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆԻ
(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամէն օր, բացի
կիրակի օրերից:
ԱՌԱՌՈՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆ—11—12 ժ. վերաբու-
ժութեան, վերականգն (սիֆիլիս) և միզասեռ. հ.
Կ. Մ. ՉԻԿՈՎՍԿԻ—9—10 ժ. աչքի, ներքին
և նեարդալոյն հ.
ԿԻՆ ԲԺԻՇԿԱՆ. Ի. ՐՈՒԿԵՆԿՈ—10 1/2—11 1/2 ժ.
կանոնի և երեխայոց հ., ծաղկի պատուա-
տուն:

Զ. Ի. ԲԱՐԱՆԱՍԵԱՆ—11 1/2—12 ժ. կա-
նոնի հիւանդ.
Ի. Ֆ. ՊՐՕՍԱՍԵՎՍԿԻ—12—1 ժ. ակնաշիւ, կո-
կորիւն, քիթի և կրծքի հ.
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1 1/2 ժ. ներքին և
երեխայոց հ.
Ա. Գ. ԳՈՐԻԿՈ—1 1/2—2 1/2 ժ. ներքին, և մի-
զասեռական հ.
ԵՐԵՎԱՆԵՐԸ
Ա. Մ. ՓՈԿԼԻՆԵԱՆ—5—6 ժ. ներքին և երե-
խայոց հ.
Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆ—6—6 1/2 ժ.
Ա. Ն. ՇՊԱԿՈՎՍԿԻ—6—7 ժ. նեարդալոյն (ե-
լեկորաբուժութիւն), վերականգն և մորթի հ.
Տ. Ի. ՐՈՒԿԵՆԿՈ հիւանդանոցում քիմիական
և խոշորացուցական հետազոտութիւններ է ա-
նում մէլի, խիստ արեւան, կաթի և այլն:
Վճար 50 կ. չքաւորները ձրի: Համախորհրդի
(կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերանորոգ.
80—150 Բժշկապետ ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆ

Յոյժէփ Գաւթեան, Բարսեղ Յոյժէփեան Տէր-Ջաւադեանցիներ և
ուրիշ. Սօֆիա Յոյժեանի սեան Գրիգորեանցը սրտի ցաւով յայտնում են իրանց
ազգականներին և ծանօթներին առաջինը՝ իր ամուսնու, երկրորդը՝ իր մօր և երրորդը իր
բոլոր՝
ԱՆՆԱԳԻՆՈՐԳԵԱՆ ՏԵՐ-ՋԱՎԱԴԵԱՆՑԻ
յանկարծակի մահը, որ տեղի ունեցաւ փետրվարի 22-ին: Հոգեհանգիստը կը կատարվի
ուրբաթ, երեկոյան ժամը 6 1/2-ին, իսկ յուղարկութիւնը՝ շաբաթ օր, փետրվարի
28-ին, իր կայարանից (Խաղաղութիւն փողոց, Միտիկովիչի տուն № 4) դէպի Թանգարանից եկե-
ղեցին, ժամը 10 1/2-ին:
1—2

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C^{ie}
ՖԱՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.
Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԵՅԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբ-
թը մի անգամ, սկսած յուլիսի 25/6-ի չորեքշաբթից,
Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մոտենալով Տրապիզոն, Սամսուն և Պոլս: Մեկնում է Բաթո-
մից՝ չորեքշաբթի, մարտ ամսի 4/16-ին ՍԻՐԿԱՍԻ չորեքուր, նաւապետ ՀԱՐԻՍԻ: Եւ այսպէս
շարունակաբար, երկու շաբաթ մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ:
Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից
պակաս գնով:
Սպարանքներ և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար
թող դարձանձնել իմեղ ընկերութեան գործակալներին:
ԲԱԹՈՒՄԻՍ—պ. Վիկտոր ԴԱՆՏԻՆ, Նաբէրէժնայա: ԹԻՖԼԻՍԻՍԻՍ—պ. Օ. Գ. Բարեկենդա-
նեանին, Սիւնի փող. հարկին Արմաւուր քաղաքապետ: ԲԱԹՈՒՄ—պ. Ս. Կիւրաբեանին, Վոլոքս-
կիականայ հրապարակ: ՆՈՎՈՐՈՍՍԻՅԱՍԿ—պ. Միլիտար Հերշեյնօրդերին: (№ 76) 17—20



ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ԹԻՖԼԻՍԻՍԻՍ
Գլխավորի Պրոսպեկտի վրա, Միլիտանովի տանը,
բացված են ամէն օր
Մ. Ա. Շուլցէ-Բէնկովսկայի Ռուսաստանից բերված
ԱՄԵՆԱՀԱՐՈՒՍՏ ՄՈՒՋԷՅԻ
բոլոր բաժանմունքները 100-ից աւելի նորութիւններ: Մուտք
արժէ 20 կոպ.:—Անատոմիական բաժինը ուրբաթ օրերը բացված
է միայն տիկիների համար:
4—5

ПРЕДОСТЕРЕЖЕНИЕ.
ВЫСОКИМ ДОСТОИНСТВА
НАШИХЪ ИЗОБРЕТЕНІЙ:
Цвѣточнаго о-де-колона,
Глицериновой пудры,
усовершенствов. Глицериноваго мыла
и парфюмеріи „Персидская сирень“,
вызывають массу подражателей,
что и вынуждаетъ насъ просить
БНКА БРОКАРЪ И КО ГГ. ПОКУПА-
телей обра-
щатьъ вни-
мніе на нашу
фабричную
марку и
фирму.
1864г. 1864г.